ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝

ՀՀ ներքին գործերի նախարարություն (ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում,), 403 սենյակ ,

-օրը՝ 16. 04.2026թ.-ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Բ. Վարդազարյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Գաբրիելյան, Ս. Սիրադեղյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Խաչատրյան

1. Տեղեկություններ ընթացակարգի մասին

1.1 «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-25» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերությունը /կոնսորցիում/ գնահատող հանձնաժողովի՝ 2026 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերության /կոնսորցիում/ ներկայացրած հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ[1], ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը[2], հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը: Միաժամանակ, քարտուղարը նույն օրը՝ 2026 թվականի ապրիլի 10-ին, «eauction.armeps» համակարգի միջոցով ավտոմատ ծանուցմամբ «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերությանը /կոնսորցիում/ ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունները՝ առաջարկելով

---

[1] *հայտում առաջարկվող ապրանքների նկարագրության մեջ ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ամբողջությամբ լրացված չէ, ինչպես նաև տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:*

[2] ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** *ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,* ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** *Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 2026 թվականի ապրիլի 13-ը, շտկել դրանք:

«ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերությունը /կոնսորցիում/ նշված ժամկետում ներկայացրել է շտկված հայտը, սակայն հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրության արդյունքում՝ 2026 թվականի ապրիլի 16-ին անհամապատասխանություն է արձանագրվել, մասնավորապես՝ նշված չէ տեղեկություն ճնշման կարգավորման համակարգի աշխատանքի վերաբերյալ (սառույցով թէ առանց սառույցի), պանորամային դիմակ (180° դիտման անկյուն) EN 136 ստանդարտին համապատասխանություն, հավաքածուի մեջ ներառված է առնվազն մեկանգամյա օգտագործման քիմ. կլանիչ՝ նյութով, թէ ոչ և նշվել է հետևյալ ստանդարտները (ԳՈՍ/ISO 9001–2011 / ISO 9001:2015-որակի կառավարման համակարգ, շնչառական պաշտպանության միջոցներ, ԳՈՍ12.4.041–2006 - ընդհանուր պահանջներ և փորձարկման մեթոդներ, ԳՈՍ12.4.034–2016 - շնչառական պաշտպանության միջոցներ, դասակարգում և պիտակավորում, ԳՈՍ Ռ ԵՆ 136–2010 - դեմքի դիմակներ, գազի բալոններ, ԳՈՍ Ռ 55989–2014, ԳՈՍ949–73 - Պողպատե անխափան բալոններ), որոնք նշված չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում:

Ուստի հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված իրավակարգավորումը, այն է՝ *եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:* ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,*** *ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը,* գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերության /կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտը մերժվել է, և այդ հանգամանքը Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով որակվել է, որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ուստի, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված իրավակարգավորումը, համաձայն որի՝ *եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:* ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,*** *ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է*

ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը, գնահատող հանձնաժողովը մերժում է «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը:

1.2 Հաշվի առնելով այն «Գնումների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ *մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը*, կձեռնարկվեն քայլեր «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊ ընկերության /կոնսորցիում/ կողմից ներկայացված բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը գանձելու ուղղությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

2. «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-25» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

2.1 ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-25 ծածկագրով գնման ընթացակարգը համարվում է չկայացած, քանի որ հայտ ներկայացրած մասնակիցի փաստաթղթերը ենթակա են մերժման՝ ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև **10-րդ օրացուցային** օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.2 Հաստատել ընթացակարգի չկայացած հայտարարելու հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Փ/Ծ գնդապետ Բ. Վարդազարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Փ/Ծ գնդապետ Մ.Գաբրիելյան

Փ/Ծ մայոր Ս. Սիրադեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՏՎ ԳՀ ավագ մասնագետ Ա. Խաչատրյան